h.1671952
14-10-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Երևանի քաղաքապետարան*

Դիմող՝ *ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

ԴԻՄՈՒՄ

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցմացման մասին

Հարգելի՛ գործընկերներ,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ։

Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը

1. Հավաքի վայրը՝ Երևան, Ազատության հրապարակ։
2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2025թ. հոկտեմբերի 18-ին ժամը 15:00-24:00
3. Հավաքի նպատակը՝ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելության և կարևորության ընդգծումը, հայ ժողովրդի հոգևոր կյանքում Մայր Աթոռի բացառիկ դերի կարևորումը և մի շարք հանրային ճանաչում ունեցող անձանց անձնական ազատության իրավունքի գերակայության ընդգծումը։
4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 10,000 անձ։
5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ Հավաքների ազատության սահմանադրական իրավունքի իրացման ամենաարդյունավետ և նույնիսկ հենց Սահմանադրությամբ հիշատակված բաթոթյա տարածքում տվյալ դեպքում իրազեկման ենթակա հավաքը իրացվելու է նաև անհրաժեշտ սարքավորումների ապահովմամբ՝ օրվա խորհրդին համապատասխան և

դրանով հավաքի կազմակերպվածության երաշխավորմամբ: Մասնավորապես հնարավոր է տեղադրվի բեմահարթակ, կոնստրուկցիաներ, ձայնային սարքավորումներ (35 կվտ), լուսային սարքավորումներ, Լեդ էկրան, հոսանքի հզորություն (30 կվտ/ժ): Հնարավոր է տեղի ունենան ելույթներ, հնչի հանրային խոսք:

6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 10 մարդ:
7. Հավաքի ընթացքում նախատեսվում է երթ մինչև 24:00, ժամի հստակեցումը Ոստիկանության ծառայողների հետ հստակեցմամբ՝ Ազատության հրապարակից Մաշտոցի պողոտա - Ամիրյան փողոց – Վազգեն Սարգսյան փողոց – Խորենացի փողոց – Վազգեն Սարգսյան փողոց - Նալբանդյան փողոցով մինչև ԱԱԾ շենքի մոտ:
8. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ ազգանուն, անուն, հայրանուն՝ Ալեքսան Բենիամինի Ալեքսանյան
9. Հավաքի ղեկավարի տվյալները՝ Ազգանուն, անուն, հայրանուն՝ Ալեքսան Բենիամինի Ալեքսանյան

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Տվյալ դեպքում ըստ ունեցած նախնական տվյալների այդ օրը նախատեսված չէ որևէ այլ անձի կողմից համապատասխան վայրում հանրային հավաք:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և -14-րդ հոդվածներով՝

Խնդրում եմ Սույն իրազեկումը ընդունել ի գիտություն:

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ